№ 3 ՄԱՐՏ 1904

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

№ 3

Յիսուս չարչարումին գիշերը *(պատկեր)*։

Անդորր կեանք — *Զարուհի*։

Օրորոցի երգ *(ոտանաւոր)* — *Գ. Նալբանդեան*։

Ուխտագնացութիւն — *(պատկեր)*։

Քրիստոս յարեաւ *(ոտանաւոր)* — *Սէյրի*։

Ցողիկի ճանապարհորդութիւնը — *Անգլ. փոխադր. Օր. Ս. Մուրհաճեանց*։

Զատկական պօսաւիւ — *(պատկեր)*։

Ծնօղաստէր վոտրիկը ապչիկը — *Ֆրանս. փոխադր. Լևոն Մ. Ադ.*

Համր — *Թարգ. օր. Ս. Լ.*։

Խաչելութիւնը երասխի ափերում — *(պատկեր)*։

Մարդը (*Առակ*) — *Հասօ*։

Սէր ասւ մխրձաւորը *(հատուած Կրուզովից)* — *Զ. Տ.-Գ.*։

Երեք մոգերը — *փոխ. Յով. Կարապետեան*։

Ձ ա ր ճ ա լ ի ք։

Քրիստոնէութիւնը Հայաստանում և Ս. Էջմիածին — *Յուսիկ Եպիսկոպոս*։

Մայր մանկանոցում — *Զալալ Տէր-Գրիգորեան*։

ԱՂԲԻՒՐ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԱՄՍԱԳԻՐ

մանուկների, ծնողների եւ դաստիարակների համար

№ 3

XXII ՏԱՐԻ Մ Ա Ր Տ 1904 Թ.

Տպարան «ՀԵՐՄԷՍ»
Тип. «ГЕРМЕСЪ» С. Назарьянца, Михайл. пр. № 81.
ԹԻՖԼԻՍ 1904

Дозволено цензурою, Тифлисъ, 17 Марта 1904 г.

Յիսուս Քարշարանքի գիծերը.

Անզորր կեանքը նման է խաղաղ գերեզմանի: Յաղթական, աստուածային անմահ կեանք ուզողը պէտք է Յիսուսի նման

փուշ պսակը գլխին
իր անձը զոհ բերի
սոգէտ ամբոխին, որ-
պէսզի տարին մէկ հը
լինի Զատիկ:

Չարուխի.



ՕՐՕՐՈՑԻ ԵՐԳ

(ժողովրդական մոտիվ)

Սարի յալէ՛ն, սիրուն յալէ՛ն,
Ալո՛ւշ—թուրթո՛ւշ իմ բալէն.
Սարի յալից չա՛տ ալուշ է
Հոտուն յալէս՝ իմ բալէն:

Ա՛յ—վա՛յ յալա՛,
Ալո՛ւշ բալա,—

Մ՛ակ հատի՛կ ես, չա՛տ ազիս ես
Հոտո՛ւն—ալո՛ւշ իմ բալա...

Պ. Նալբանդեան

Ուխտագնացութիւն Նոխուայ գաւառում.

ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՒ.

—

Քրիստոս յարեաւ՝ տես, չքնջում են
Ուռի ոստերը մեր շուրջը մեղմիկ.
Քրիստոս յարեաւ՝ լուռ աղօթում են
Մանուշակները նորեկ Գարունքին։

Քրիստոս յարեաւ՝ ու ծըլըլում են
Կապոյտ ովկիանում նորեկ թռչուններ։
Քրիստոս յարեաւ՝ սաւառնում է, տես,
Զէփիւռի թևով ղէպի ջինջ եթեր։

Մաքուր հրճւանքով լսում ենք երգը
Սուրբ ճշմարտութեան վեհ յաղթանակի.
Քրիստոս յարեաւ, Քրիստոս յարեաւ՝
Ձայնակցում ենք մենք նոցա օրհներգին։

Քրիստոս յարեաւ՝ խառնում ենք մեր ձայնն
Ուռենու ոստի մեղմ շշնչիւնին.
Եւ աղօթում ենք մանուշակի հետ,
Լսում են մեր ձայն նորեկ թռչունները։

Ամբիծ աղօթքը Քրիստոս յարեաւի
Օրօրում է մեղմ զեփիւռի թևին,
Եւ նորան ղէփիւռը վերև է տանում,
Ու աստծու աթոռն այսպէս խնկարկում։

Սէյրի.

—

ՅՈՂԻԿԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆԸ

I.

Լայնատարած ովկեանոսում մի պայծառ ու տաք օր փայլում էին հազարաւոր ջրային կաթիլները։ Սրանցից մէկն էր և ուրախ ու փոքրիկ Յողիկը, որը շարունակ պարում էր ջրում յետ ու առաջ վխտացող ձկների արծաթափայլ թիկունքների վրայ։

Երբեմն ալիքները նետում էին նրան վեր, շատ բարձր, բայց նա կրկին ցած էր ընկնում իւր մօր գիրկը։

Գիտէ՞ք ով էր նրա մայրը։

—Ովկիանոսը, որ գարնանային օրերում շատ գեղեցիկ էր երևում իւր սև ու ծփացող դղեստանեըով։

Մի օր Յողիկը վեր նայելով մտածեց.

Իսկապէս լաւ կըլինի, եթէ մի ճանապարհորդութիւն կատարեմ այդ երևացող ամպերի մէջ։

Մտածեց ու կատարեց։ Եւ ահա նա մի թեթև ոստիւնով վեր ցատկելով մօր գրկից դէպի արևը, խնդրեց նրանից.

—Ինձ էլ տար քեզ հետ, ես ուզում եմ մանզալ, աշխարհը տեսնել։

—Ձմա լաւ, ասաց արևը. և վերցրեց Յողիկին

ու նրա ընկերներից հազարաւորներին, որ նա միայնակ չըլինի։ Բայց Ցողիկը չ'իմացաւ այդ, որովհետև նրանք բոլորն էլ փոխուել էին մէգի։

Գիտէ՞ք ինչ բան է մէգը։

Անչուշտ դուք տեսած կըլինիք թէ ինչպէս գոլորշին դուրս է գալիս կաթսայից, երբ նրանում եռում է ջուրը։ Գիտէք և այն, որ եռացած ջրի փոքրիկ մասնիկները դառնում են գոլորշի։ Մէգն էլ կազմւում է միևնոյն կերպով, միայն թէ մասնիկները այնքան մանր են, որ դուք նրանց չէք կարող նշմարել։ Ջրի կաթիլները փոխուեցին մէգի, որովհետև նրանք մեծ ու ծանր լինելով՝ չէին կարող լողալ օդում։

Բարձր, աւելի բարձր լողալով օդում, նրանք կարճ միջոցում անցան հարիւրաւոր մղոններ։ Քիչ՝ արևի սպիտակ դէմքը սկսեց կարմրել և նա թեքւելով հեռացաւ հորիզոնից՝ վայելելու իր գիշերային հանգիստը։

II.

Քեզ փոքրիկ ցողիկը չատ վախեցաւ. նա մըրսում էր. իսկ չորս կողմը խաւար էր պատել։ Նա գիտէր, որ այլևս չի կարող գտնել իրենց տան ճանապարհը։ Նա սկսեց մտածել երկրի վրայ իջնելու մասին և իջաւ էլ։

Եղբայրները էլ հետևեցին նրա օրինակին և սկսեցին ցած իջնել աւելի ու աւելի մեծանալով,

մինչև որ փոխեցին ջրի նախկին փոքրիկ ու փայլուն կաթիլների։

Սակայն նրանք շատ ու շատ հեռու էին մայր ովկիանոսից. և երբ ցած իջան երկրի վրայ, իրանց գտան մի գեղեցիկ պարտիզում։ Յողիկն ընկաւ մի վարդի կոկոնի վրայ, որը բաց անելով իր թերթիկները՝ սիրով հիւրընկալեց նրան։ Այնտեղ—թաւշապատ բարձիկների վրայ, նա հանգիստ քնեց մինչև առաւօտ։

Լուսացաւ։ Թռչունները զարթնելով՝ սկսեցին իրանց երգերը. և Յողիկները բաց արին իրանց թերթիկները։ Յողիկը տեսնելով արևին, սկսեց երկրորդ անգամ խնդրել նրանից.

—Սիրելի՛ արև, վերցրո՛ւ ինձ և եղբայրներիս էլ. մենք դեռ ուզում ենք շատ բաներ տեսնել։

Արևը վերցրեց նրանց, և սկսեցին իրանց օդային արշաւանքը։

Այս տևեց մինչև կէսօր։ Օդը գնալով աւելի տաքացաւ։ Ջոզը, ը շատ նեղեց Յողիկին, նա թոյլ աւուրթիւն խնդրեց արևից՝ վերադառնալու իր մօր մօտ։

Քամին խղճաց նրանց, սկսեց փչել ուժգին և իր պաղ շնչով փոխեց նրանց մի սև թուղթի, հրամայելով վայր իջնել երկրի վրայ։

Ահա նրանք ցած են իջնում իրար առաջ կըտրելով, միմեանց վրայ գլորւելով և աղմուկ բարձրացնելով։ Նրանք գետին հասնելով՝ սկսեցին պարել։

Նրանց տեսնելով՝ մարդիկ ազազակեցին—«անձրև-ճում է»։

III.

Յողիկն ու իր եղբայրներից միքանիսը վայր ընկան մի լեռան վրայ և սկսեցին ցած վազել ժայռերի միջով։ Նրանց բնկերանում էին հեռ-տևող կաթիլները, այնպէս որ նրանցից կազմուեցաւ մի լեռնային փոքրիկ առուակ, որ ոստոստալով ու խոխոջալով՝ ցած էր գլորւում ժայռերի միջից։ Ձորը հասնելու միջոցին՝ նրանք լսեցին մի աղմուկ. մի ջրաղաց կար այնտեղ. դրան առաջ կանգնած էր ալրաթաթախ հագուստներով մի մարդ։ Ջրաղացի ներսում, իրար վրայ դրւած էին երկու մեծ երկա-նաքարեր, որ զոռզոռալով պտտւում էին և փոշի դարձնում ոսկեփայլ ցորենը։

Բայց ո՞վ էր այն հսկան, որ պտտեցնում էր այդ ահագին քարերը։

—Ո՛չ ոք. այդ գործը կատարողները—Յողիկն ու իր եղբայրներն էին, որ ցատկելով անւի վը-րայ, պտտեցնում էին քարերը։

Այժմ առւակը հոսում էր մի աւազանի մէջ, ուր լողում էին մի քանի բադեր։ Իսկ նրա ափերին նստոտած գորտերը մեծ հետաքրքրութեամբ նայում էին փոքրիկ ձկների զարճալի խաղերին և, ի վեր-ջոյ, իրանք էլ գլխիվայր նետւում էին աւազանը, լողում էին ջրում, երբեմն գլուխները բարձրացնելով ու բռնելով անհոգ ճանճերին։

Ցողիկը շատ սիրեց այդ տեղը. մի քիչ յետ մնալով ընկերներից, նա ցատկեց բարձր թևի վրայ և սկսեց դիտել, կարծես թէ նայում։

Վերջապէս ձանձրանալով պարապմունքից, շարունակեց նա իւր գործը։

Ընցնելով մի ընդարձակ տարածութիւն, նա և իր ընկերները նկատեցին մի ուրիշ առուակ, որը ցած էր հոսում մի բլրակի կրծքից։

—Եկէք ձեռք-ձեռքի տանք միւս առուակի հետ. ասաց Ցողիկը։ Եւ եղբայրների հետ միանալով նրանք սկսեցին առաջ գնալ, մինչև որ հասան մի համեստ գետակի, որը գրկաբաց ընդունեց նրանց։

Ցողիկի և իր եղբայրների օգնութեամբ փոքրիկ գետակը մեծանալով խորացաւ այն ինչ մի քիչ առաջ՝ շատ փոքր էր ու ծանծաղ, այնպէս որ մի փոքրիկ երեխայ նրա միջից հեշտութեամբ կարող էր անցնել։

Գետը առաջ էր սահում դէպի մայր ովկիանոսը։

Ինչպիսի՜ նոր և հետաքրքիր բաներ տեսան մեր բարեկամները։

Նրանք անցան շա՜տ մեծ քաղաքների միջով, տեսան շատ գործարաններ և մի քանի երկաթեայ գեղեցիկ կամուրջներ։ Ձոգենաւերը լողում էին նրանց վրայով։ Բայց Ցողիկը չէր կարող սպասել այդտեղ. նա ցանկանում էր ժամ առաջ տեսնել իր մօրը, դէպի որը գետը սահում էր մեծ արագութեամբ։ Ահա և մայրն ու միւս եղբայրները, որոնք չէին

մանակցել նրա ճանապարհորդութեանը. վերջապէս, նա հանգիստ գտաւ իրենց տանը...

Ամառնային տաք ժամերին ես սիրում էի պտտելու լինել ծովափում, որտեղ կրլսէք ալիքների խուլ մրմունջը: Մի քանի բանաստեղծներ կարծում են, որ այդ՝ ծովակի և իր ընկերների ձայնն է, որ պատմում են իրար, իրանց գարմանալի ճանապարհորդութեան մասին, որ կատարեցին աշխարհում:

Թարգմ. Անգլիերէնից
Օր. Սօֆ. Մուրհաջեանց.

Թ ա ւ ր ի զ.

Չաստկաւկաւն զբօսաւնքի.
Եկեղեցու դարաք բակում։

ԾՆՈՂԱՍԷՐ ՓՈՔՐԻԿ ԱՂՋԻԿԸ

(Նուէր մեր սիրելի Աբիւկին)

Չինաստանում եղել մէկը բռնվում է խաբեբայութեան, կամ որևէ վատ արարքի մէջ, մի շատ հին օրէնքի զօրութեամբ կտրում են այդպէս մարդու երկու ձեռքը։

Իհունգ անունով մանդարինը*) բռնվում է խաբեբայութեան մէջ։

Երբ կայսրն իմանում է իր բարձր պաշտօնեայի այդպիսի անպատուաբեր արարքը, սաստիկ բարկանում է և հրամայում, որ հին օրէնքի պահանջը ճշտութեամբ կատարեն, այն է՝ կտրեն խաբեբայի երկու ձեռքը։

---

*) Չինաստանի բարձր պաշտօնեաները այդպէս են կոչվում։

Պատիժը գործադրելուց առաջ կայսերական պալատն է գնում դատապարտուածի փոքրիկ աղջիկ Սիու-Լիէն և պալատականներին խնդրում, որ թոյլ տան իրան թագաւորին ներկայանալու։

Աղջկայ ուղածը կատարելը հեշտ բան չէր, այլ շատ դժւար իրագործելի. որովհետև ամեն մարդու թոյլ չեն տալիս թագաւորին մօտենալու։ Ուստի պալատականները մերժեցին նրան։

Սակայն Սիու-Լիէն՝ որ մեծ յոյս ունէր իր ծնողին ազատելու սպառնացող վտանգից, չյուսահատուեց այդ մերժումից, այլ իր անմեղ աչքերից արտասուք թափելով՝ այնքան թախանձեց, այնպէս համոզեցուցիչ կերպով խնդրեց, թէ անհրաժեշտ է իրան թագաւորին ներկայանալու, որ պալատականները զթաշարժուելով փոքրիկ աղջկայ վրայ, համաձայնեցին և թագաւորին ներկայացրին նրան։

Սիու-Լիէն՝ երբ յանկարծ իրան տեսաւ թագաւորի դիմաց, իսկոյն ընկաւ երեսի վրայ և մորմոքիչ ձայնով ասաց։

—Թագաւորն ապրած կենայ. ասում են հայրս այնպէս բան է արել, որ հրամայել ես նրա երկու ձեռքը կտրել... Ահա, Մեծ Արքայ, վէր առ իմոնքը։

Ասում է և դէպի կայսրը մեկնում իր փոքրիկ, քնքուշ թաթիկները։

—Այս ձեռքերս,—խօսքը շարունակում է փոքրիկ աղջիկը,—իմ դժբաղդ հայրիկիս են պատկանում։ Սրանք դեռ շատ փոքր են և թոյլ. սրանք ան-

կարող են կերակրելու ուժասպառ եղած մայրիկիս, հիւանդ եղբօրս և ինձնից փոքր քրոջս: Ուրեմն վե՛ր առ, Տէ՛ր Արքայ, այս ձեռքերս և հրամայի՛ր, որ օրէնքի պահանջած խստութեամբ վարուեն սրանց հետ. միայն թէ ազատուէր սիրելի հայրիկս և անմնաս մնային նրա ձեռքերը, որոնք մի ամբողջ ընտանիք պէտք է կերակրեն:

Փոքրիկ աղջկայ այդ խելօք խօսքերից կայսրը մնաց հիացած. բայց կամենալով փորձել նրա սիրոյ չափը, ասում է.

—Վե՛ր կաց, խե՛լօք աղջիկ: Թո՛ղ քո ուզածը լինի. թո՛ղ հօրդ մեղաւոր ձեռքերի փոխարէն քո անմեղ թաթիկները կտրուեն:

Յետոյ կայսրը հրամայում է անմիջապէս տանեն աղջկան պատժավայրը և նշանակած ժամին էլ նոյն տեղը բերեն նաև դատապարտուած մանդարինին:

Պատժավայրում փոքրիկ աղջկան մօտեցրին դաւթի մէջտեղը դրուած և ամբողջովին արեան բծերով ծածկուած կոճղին, թևքերը յետ ծալեցին և նրա սիրուն, փափկիկ դաստակները կապեցին կոճղի մէջ անցկացրած երկաթէ օղերին:

Երբ ինչ որ պէտք էր, արին-վերջացրին, իսկոյն մօտ եկաւ դահիճը և սուրը հանեց պատեանից:

Ներկայ եղողները քար կտրուեցին սարսափից. սակայն փոքրիկ աղջկայ միայն դոյները թռաւ, բայց գլուխեան ո՛չ մի խօսք չարտասանեցին նրա անմեղ շրթունքները:

Դահիճը բարձրացրեց իր սարսափելի սուրը մանկական ձեռքերի վրայ և սպասեց նշանի, որ կտրելու համար սուրը վրայ բերի։

Առաջ եկաւ կայսրից ուղարկուած մի մանդարին և դահիճին ձեռքով նշան արաւ։

Ամենքի աչքերից արտասուք թափուեցին։

Իսկ դահիճը ժպտալով սուրը վրայ բերաւ և... առանց նրա մատին անգամ դիպչելու, կրկին դրաւ պատեանի մէջ։

Հէնց նոյն միջոցին էլ պատժարանի դուռը լայն բացուեց։ Ներս մտաւ կապանքներից արձակուած հայրը, որ աչքերը ուրախութեան արտասուքով լի և չնորհապարտ բազուկները տարածած՝ վազեց ու գիրկն առաւ իր աննման աղջկան։

Ներկայ եղողները զարձեալ արտասուեցին, բայց այս անգամուանը ուրախութեան արտասուքներ էին։

Կայսրը ներեց մանդարինին և հրամայեց, որ այնտեղի վրայ, ուր փորձի ենթարկեց փոքրիկ աղջկայ որդիական այդպիսի մեծ սէրը, այլևս ոչ ոք չպատժուի։

Իսկ իբրև յուշարձան այդպիսի ծնողասիրութեան, կոճղը դրուած տեղի վրայ էլ մի գեղեցիկ կոթող բարձրացրին, որի վրայի մարմարեայ տախտակի վրայ ոսկեզօծ տառերով այս խօսքերն էին փորագրուած.

„Այստեղ Հնուց անուանով մանդարինի փոքրիկ աղջիկ Սիու-Լիեն պատրաստ էր

իր կեանքը զոհել՝ ծնողի կեանքը փրկելու համար:

„Երանելի է այն ծնողը, որ այսպիսի զաւակ ունի:

„Երանելի է այն հողը, որի մէջ այսպիսի սէր է բուսնում եւ աճում“:

Իսկ մենք կ'աւելացնենք.

Երանելի է այն ժողովուրդը, որ երբէք չի ստում, չի խաբում, այլ միշտ ճշմարիտն է ասում և միայն արդարութեան ձայնին լսում:

Երանելի է այն երկիրը, ուր ամենքն են Սիու-Լիէի նման ծնողասէր և աշխատանքի յարգն իմացող:

Այո, եթէ մեր հայ տղաներն ու աղջիկները Սիու-Լիէնի նման սիրէին իրանց հայրիկին ու մայրիկին, անպատճառ կը լսէին նրանց խրատներին, իրանց որդիական պարտքը անթերի կը կատարէին, այսինքն՝ ծուլութիւն չէին անիլ, այլ միշտ խելօք ու աշխատասէր կը լինէին:

Այդպէս խելօք ու աշխատասէր որդիները թէ Աստծուն հաճելի, թէ մարդկանց սիրելի և թէ իրանց ծնողների համար ուրախութեան ու մխիթարութեան աղբիւր են:

Եւ ինչպէս, ինչպէս լաւ կը լինէը, սիրելի ընթերցողներ, եթէ ամենքդ էլ փոքրիկ Սիու-Լիէնից օրինակ վերցնէիք և նրան հետևէիք: Այն ժամանակ

մեր սիրելի ազգն էլ երանելի կը լինէր միւս ազգերի մէջ։

Մի՛թէ չէիք ուզիլ, որ դուք խելօք լինէիք և մեր ազգն էլ երանելի լինէր։

Եթէ այո՛, եթէ ուզում էք, ապա ուրեմն գործով էլ ցոյց տուէք և ոչ թէ միայն դատարկ խօսքով։

Մենակ խօսելով բան չի դառնալ, այլ խօսքի հետ պէտք է սրտանց գործ էլ չինէք, սիրելիք։

Ֆրանս. փոխադր. Լեւոն Մ.-Ադ.



ՔՈՅՐ ԵՒ ԵՂԲԱՅՐ

(Աւանդութիւն)

I

Իրուն արեւ, դու իմ fոյրն ես.
Մեր մէջ չը կայ խորթ-մօրի.
Դու թել ունես, ասեղ ունես,
Եկ ինձ համար շոր կարի:

Քո խնամքը տարածել ես
Աւար-աշխարհի վերայ.
Բայց մինուճար fո եղբօրն ես
Դու մոռացել աշկարայ:

Պիշերները ես մրսում եմ,
Քոյրիկ, մերկ եմ, ամօթ է.
Էլ ո՛վ ունեմ, որ բան ասեմ,
Ո՛վ fեզանից ինձ մօs է:

II

Ընուշ եղբայր, անուշ լուսին:
Հոգիս դուրս գայ fեզ համար.
Դու կարծում ես, որ fո մասին
Չեմ մրցածում անդադար:

Ես կուզէի որ fո բոյին
Շոր կարէի խրճխրճան,
Որ դու երկնի վառ աստղերին
Չերեւայիր անընդհան:

Ծիածանի վառ գոյներից
Չեւէի ինձ պատմուճան
Եւ ոսկեթել իմ մազերից
Կարէի այն, եղբա՛յր ջան:

Իմ ճնորհը եւ իմ սէրը
Ցոյց տայի ինձ, իմ լուսին,
Որ թէ մարդը, թէ աստղերը
Չարմանային միասին:

Բայց ի՞նչ անեմ՝ հասակ չունես,
Բոլոր չափի տակ չի գալ.
Մէկ տեսնում եմ դանկի մէջ ես
Մէկ էլ տեսար դարձար կալ:

Կերպարանիդդ միշտ փոխում ես,
Լրումդ առնում եւ նորում
Կէսդ կորցրած երեւում ես
Գիշերային խաւարում:

Գրնա եղբայր, մի ամաչիր,
Մերկ են նոյնպէս աստղերը.
Եւ ոչ ոքի մի գանգատիր,
Որ շոր չարեց ֆո ֆոյրը:

Ս.Ր. Խնկոյեան

ՀԱՄՐ

(ԺՕԶԻՖ ՄՕՆՏԻ)

—

—Գիւղացիք... աղաղակեց Շարլը, հեռանալով մականախաղից... նրանց հետ դժուարէ դլուխ դնել: Պրուսացիների արշաւանքի ժամանակ նրանք թշնամիների հետ աւելի լաւ էին վարւում, քան թէ իրանց հայրենակիցների հետ... էլ չեմ ասում ազատ աղեղնաձիգների մասին, որոնցից վախենում էինք, ինչպէս ժանտախտից:

—Դուք սխալւում էք. սիրելիս, չըփոխելով իր դիրքը, հանդարտ կերպով պատասխանեց Պիէր Ներոն, որ կանդնած էր վառարանի մօտ:

—Իսկ դուք համոզւած էք, որ ասածս չէ. հարցրեց Շարլը, դիմելով դէպի իր խօսակիցը:

—Իհարկէ, և այդ դէպքը առաջինը չէ: Հէնց նոյնիսկ Նորևրումս ես հնար ունեցայ ապացուցանելու, որ հայրենիքի թշւառ րոպէներում ֆրանսիացու սիրտը՝ թէ գիւղացու վերնաշապկի և թէ գինւորի նշանազգեստի տակ միատեսակ է բաբախում նրա սիրով:

«Ընկերութիւնից» ուժ թէ տաս մարդ շրջապատեցին Պիէրին և սկսեցին խնդրել, որ նա պատմէ նրանց այդ անցքը:

—Ուրախութեամբ, ասաց նա: Լսեցէք: Անցեալ տարի ամառը ես այցելեցի իմ նախկին դպրոցական ընկերը՝ բժիշկ Դիւբրէյլին, որ բնակւում էր Վօգեզի նկարագեղ անկիւններից մէկում: Մի օր մենք վճռեցինք ճաշից յետոյ գնալ մօտակայ

անտառը, որի թարմ կանաչը այնպէս հրապուրիչ կերպով փայլում էր կէսօրեայ արևի ուղղահայեաց ճառագայթների տակ։ Դիւբրէյլը սկսեց ծխել իր չիբուխը, իսկ ես սիգար։ Մենք դեռ սրահում էինք, երբ յանկարծ մերձեցող քայլերի աղմուկը հարկադրեց մեզ յետ նայել։

—Ա՜..., սա թղթաբերն է, ասաց ընկերս։ Խնդրեմ սպասի՛ր փոքր ինչ. հարկաւոր նամակ ունիմ ուղարկելու, իսկոյն կը գամ։

Այս խօսքերից յետոյ ընկերս դնաց տուն, իսկ ես, որովհետև գործ չունէի, սկսեցի դիտել նորեկին։ Նա մի երիտասարդ էր մօտաւորապէս 27-28 տարեկան, երեսի նուրբ գծագրութեամբ ու եռանդոտ արտայայտութեամբ։ Նորեկի ճակատը լայն էր, իսկ աչքերը բարի և վառվռուն։ Նկատելով ինձ, նա թեթև կերպով շարժեց գլուխը։

—Երիտասարդը, ինչպէս երևում է, շատախօս չէ, մտածեցի ես, մինչև անգամ բարևել չի կամենում։ Սակայն նրա դէմքը այնքան գրաւիչ էր, որ ես վճռեցի առաջինը սկսել խօսակցութիւնը։

—Ինչքան շոգ է, նկատեցի ես, կարծեմ հեշտ չէ այսպիսի եղանակին չափչփել դաշտերը։

Նա գլխով հաստատական նշան արաւ։ «Ուրեմն սա խօսել չըգիտէ», անցաւ մտքովս։

Երիտասարդը զարմացք կարդաց հայեացքիս մէջ և նրա շրթունքների վրայ խաղաց մի տխուր ժպիտ, երկու մատը մօտեցրեց բերանին և գլուխը շարժեց։

Այս անգամ ես նորան հասկացայ։

—Դուք հնմր էք, հարցրի ես։

Հէնց այդ րոպէին երևաց Դուբրէյլը նամակը ձեռքին և լսելով հարցմունքս ասաց.

—Այո՛, խեղճ ժանը համր է. սակայն այդ պակասութիւնը չի խանգարում նրան ճշտութեամբ վարելու իր պաշտօնը, որովհետև գրել կարդալ գիտէ և լսում է։

—Ուրեմն հնմր է ոչ 'ի ծնէ, եթէ խուլ չէ։

—Այո՛, ոչ 'ի ծնէ։

—Ուրեմն այդ հետևանք է մի ժժբաղտ դէպքի։

—Այս խօսակցութիւնը անախորժ է քեզ համար, այնպէս չէ՞, սիրելիս։

Պատանին ամօթխածութեամբ ժպտաց և ձեռքը մեկնեց, որ նամակը վերցնի։

—Սիրելիս, իհարկէ որ այս ամենը անախորժ կը լինի քեզ համար. որովհետև ես պէտք է պատմեմ քո մասին և դու անկասկած չես կամենայ ներկայ գտնուել։ Դնա՛, հո՛գիս, ես քեզ չեմ պահում և չեմ սկսի, մինչև որ դու չվերադառնաս։

Դոլըրէյլը՝ նամակը տալիս, բարեկամաբար սեղմեց նրա ձեռքը։ Պատանին քաղաքավարութեամբ գլուխ տուաւ և շտապով հեռացաւ, իսկ մենք ուղղեցինք մեր քայլերը դէպի անտառ, ուր ծաղկալից կանաչը խոստանում էր մեզ զով ու հանգստութիւն՝ այրող տօթից։

Ճանապարհին ընկերս պատմեց հետեւեալը.

Պատերազմի ժամանակ տասն և հինգ տարեկան Ժան Բարբօն բնակւում էր զիւղի ծայրին գտնուող մի խրճիթում իր ծերունի հօր և քսանեհինգ տարեկան մեծ եղբօր հետ։ Որովհետև Ժանը դեռահաս էր, ուստի չըմասնակցեց պատերազմին, իսկ անդրանիկ եղբայրը՝ Լուին անյապաղ մտաւ պատերազմողների շարքը։ Երկու-երեք անդամ քաջութիւններ գործեց կռւի դաշտում և բացի դրանից, կատարեց նաև ուրիշ ծառայութիւններ։ Բայ ծանօթ լինելով երկրին, նա մի վտանգաւոր գործ ստանձնեց.—հեռագիրների ցրելը գերմանական բանակի միջով, որ բաժանում էր Մէցի զօրքը մնացեալ Ֆրանսիայից։ Երեք անգամ արդէն յաջողել էր նրան կատարել այդ վտանգաւոր ճանապարհորդութիւնը, և ծերունի Բարբօն՝ գիտենալով այդ բանը, չկարողացաւ սանձահարել իր լեզուն. նա սկսեց պարծենալ մեծ որդու քաջութիւնովը, ուստի իր անզգուշութիւնը իր տունը քանդեց։

Պրուսացիք՝ որ մէկ ամսից աւել էր գտնւում էին զիւղում, սկսեցին զաղտնի կերպով հսկել խրճիթի բնակիչներին, յուսալով՝ որ մի օր կը պարզւի գործը։

Եւ ճշմարիտ, պատահեց այն, ինչ որ նրանք ցանկանում էին։ Մի երեկոյ Լիւին այցելեց իր հօրը. խօսակցութեան ժա-

մանակ յանկարծ լսեց ծանր քայլերի ձայն և դուռը ճռռաց հարւածների տակ։

Մթութեան մէջ նրանք չընկատեցին, թէ ինչպէս երկուսն էլ մի ակնթարթում դունաթափուեցին, միայն նրանց ձեռքերը անզգայաբար սիացան։ Խրճիթը շրջապատւած էր, փրկուելու յոյսը արդէն կորած։ Այդ միջոցին Լուին ցածր ձայնով կանչեց իր եղբօրը, հանեց ծոցի գրպանում կարւած թղթերով լի մի ծրար, տւաւ նրան ու ասաց.

—Աշխատիր անցնել փարախի կտուրի վրայով և թաղել դաշտում։

Երեխան մի վայրկենում անյայտացաւ իր հետ տանելով թանկագին ծրարը։

Այդ րոպէին դուռը չը դիմանալով զօրեղ հարւածներին՝ կոտրւեց և ութ թէ եօթ պրուսացի զինւոր մի սպայի առաջնորդութեամբ, ներս խուժեցին խրճիթը՝ ատրճանակները ձեռքներին։

Փնտռտուքիւնը երկար չըտևեց. որդին լրտես էր, իսկ հայրը նրա պաշտպանը։ Նրանց վիճակը պարզ էր. վաղը գնտակահար պէտք է լինէին։ Իսկոյն, առանց ժամանակ կորցնելու, սկսեցին խուզարկուքիւնը։ Երիտասարդ զիւղացին հանեց վերնաշապիկը, տակի շապիկը... Ոչինչ չըկար։

—Ո՛ւր են հեռագրները, որոնց դու ցրւում էիր, հարցրեց խուզարկող սպան։

—Հեռագրնե՞ր, հարցրեց Լիւին. ինձ մօտ ոչ մի հեռագիր չըկայ։

—Հապա ինչ կար ահա այստեղ. ասաց սպան, մատնացոյց անելով կարը քանդած գրպանը։

—Դուք կարծում էք՝ այստե՞ղ պէտք է լինէին հեռագրները։

—Այո՛, ես համոզւած եմ. հեռագրները դեռ մի քանի րոպէ առաջ ահա այստեղ պէտք է լինէին։

—Ի՛սկ որովհետև նրանք այստեղ չեն, ապա ուրեմն որտնեցէք։

—Խուզարկեցէք ամբողջ խրճիթը, ասաց սպան։

Զինւորները լուռ սկսեցին բանալ արկղները, նայել կահ-

կարասիների մէջ և մինչև անգամ վառարանի մոխիրը քըքըքըեցին։

Այդ րոպէին տան շէմքի վրայ երևացին երկու պինուրը, որոնք քաշքշելով բերում էին փոքրիկ Ժանին։ Այդ երկու պինուրը, որոնք կանգնած էին դրսում խրճիթը հսկելու, նկատեցին մի ինչ որ երեխայ՝ չափարից ցատկելիս։ Նրանք բըռնեցին նրան և բերին իսկոյն իրանց մեծաւորի մօտ։

Երեխան աշխատում էր թագցնել ձեռքերը։ Սպան նկատեց այդ և կոպիտ ձայնով դիմեց նրան։

—Այդ ինչ ես թագցնում։

—Ե՛ս—ոչինչ։

—Ապա, ցոյց տուր ձեռքերդ։

Երեխան դէմ արաւ ցեխոտած ձեռքերը։

—Ա՛յ դու օձի ճուտ, աղաղակեց սպան, դու թագցրել ես թղթերը. ասա, որտեղ։

Երեխան լուռ էր։

—Լսիր, շարունակեց ղերմանացին. սա հայրդ է, իսկ սա եղբայրդ, այնպէս չէ։

Երեխան՝ որպէս հաւանութեան նշան՝ գլուխը շարժեց։

—Ուրեմն, եթէ դու չասես, թէ որտեղ են թղթերը, երկուսն էլ գնտակահար կը լինին, իսկ եթէ ասես, ես ազնիւ խօսք եմ տալիս, որ կը խնայեմ սրանց կեանքը։

Երեխան, կարծես իր հայեացքով հօրից խորհուրդ էր հարցնում։

—Ժան, ասաց հայրը, չըմոռանաս այն, ինչ որ ասելու եմ քեզ հիմա. եթէ մինչև անգամ սպանեն մեզ աչքիդ առաջ, դու ոչ մի բառ չըթռցնես բերանիցդ։

—Շատ լաւ, հայրիկ. պատասխանեց Ժանը։

—Ուրեմն մինչև վաղը. կատաղութեամբ վերջացրեց սպան։

Հետևեալ օրը, արևի ծագման հետ, մօտակայ գիւղի հրապարակի վրայ գիւղապետի պատի տակ կանգնած էին գըլխարաց ու գունաթափ դէմքով ծերունի Բարբօն իր որդու հետ։ Բսան քայլ հեռաւորութեան վրայ պատրաստի հրացաններով կանգնած էր մի ջոկատ։ Հրապարակի մօտ՝ որ շըրջապատւած էր պինուրներով, ժողովել էին գիւղում մնացած

բնակիչները— կանայք ու ծերունիները, որոնք արնալից աչքերով՝ նզովք ու անէծք էին թափում թշնամիների գլխին։

Ջօրքի առջև, երկու զինուոր պահապանների մէջ, կանգնած էր Ժանը՝ դիակի պէս բայց հանգիստ։

Կէս ժամ առաջ սպայի հրամանով պահանջել էր Ժանին գիւղապետը, որի հսկողութեան տակ էին գտնւում վերջինիս հայրն ու եղբայրը, և հրամայել, որ նրանց մենակ թողնեն։ Արդեօք ինչ էր սպասում նա այդ տեսակցութիւնից, երևի նա յուսով էր, թէ երեխայի արտասուքը կը շարժէ գերիների հաստատամտութիւնը, բայց այդ սխալ էր։ Երբ Ժանը դուրս եկաւ այնտեղից, սպան հարցրեց նրան, թէ կամենո՞ւմ է խօսել գոնէ այժմ։

—Ո՛չ, հաստատ պատասխանեց Ժանը։

Այն ժամանակ հօրն ու եղբօրը բռնեցին և կանգնեցրին պատի տակ՝ սպասելով հրամանի։ Ամբոխի մէջ սարսափելի լռութիւն տիրեց։ Սպան գերմաներէն հրաման տւաւ։ Զինուորներն ուղղեցին հրացանները դէպի դատապարտւածները։ Նա նորից դիմելով երեխային՝ կրկնեց իր հարցը։

Դժբաղդի շրթունքները անշարժ էին, սակայն նրա դէմքն այլայլւեց սաստիկ ցաւից և նրա ձայնը կարծես խեղդւեց— ճնշւեց կոկորդի մէջ։ Խեղճը օրօրւեց։

Սպան մօտեցաւ երեխային և սկսեց դիտել նրա ամեն մի շարժումը՝ սպասելով որ խոստովանութիւնը դուրս կը թռչի նրա պինդ սեղմած շրթունքներից։ Բայց ոչ թէ խոստովանութիւն, այլ արիւն հոսեց երեխայի բերանից։

Սպայի նշանագղեստի վրայ, ուղիղ սրտի մօտ, արեան մի բիծ դոյացաւ, իսկ նրա ոտքերի մօտ ընկաւ մի ինչ-որ կամբագոյն, անձև բան. այդ մի մսի կտոր էր. իր սուր ատամներով երեխան կծել-կտրել էր լեզւի ծայրը, որ դուրս էր թքեղ ուղիղ գահճի երեսին։

—Արձակեցէք, կատաղի ձայնով հրամայեց սպան, դառնալով զինուորներին. լսեց բազմաթիւ հրացանների պայթիւն, ինչպէս ամպի որոտումն։

Ժանը ուշաթափ ընկաւ նոյն րոպէին, երբ ծերունի Բարբօն և նրա Էլի որդին թշնամիներից գնտակահար եղած՝ փուեցին գետնի վրայ։

—Ահա թէ ինչու մեր թղթաբերը համր է. վերջացրեց իր պատմութիւնը Դուբրէյլը։

Թարգմ. Or. Ս. Լ.

Խաչնարածութիւնը Երասխի ափերում.

Մ Ա Ր Դ Ը.

(Առակ)

—

Զը գիտեմ ինչպէս, որ մի մարդու ծոց
Մի անգամ մտաւ մի դաժան չար օձ.
Շուռալուեց դէպ վեր, փաթաթուեց վզին
Դլուխն ականջի մօտ՝ պոչը դրեց ուսին։

Միայն օձի տեսքն սարսուռ է բերում
Ո՛ւր մնաց զգալն նրա մահառիթ թոյնն։
Օձը սուլում էր թոյնը բերանին.
Մարդը դողում էր մահուան եզերքին։

Մօտիկ, ոչ հեռու նիհար, պառաւ ձի
Հազիւ շարժում էր գլուխն ու ազի.
Մի կողմից ճանճերն, միւս կողմից բօռերն
Ծծում էին ձիու վերջին ուժերն։

«Չի՛, պատուական ձի,
Ինձ մահից փրկի»։

Աստմ էր մարդը լալագին ձայնով
Իւր օրհասական վիճակը ցոյց տալով։
Ձին մտիկ արեց, գլուխը շարժեց
Ի՛ր դժբաղդութիւնն պատմել սկսեց,

«Ձրդ չահել էի, ուժս տնդն էր,
Աշխատում էի ցերեկ ու գիշեր,
Մարդիկ խնամում, ինձ պահում էին,
Այն ժամանակ ես ոնգէի մեծ գին։

Եկաւ ժամանակ, ծերութիւնն յաղթեց,
Ոտներս ուժը, աչքիս լոյս պակասեց՝
Գոմից, ախորից լինճ դուրս քշեցին
Եւ սպասում են մահուանըս օրին՝
Որ կաշիս քնքշին ամբակներս տանեն
Եւ շուկաներում վաճառքի հանեն։
Ես քեզ օգնելու չունեմ ուժ ու սիրտ,
Ախ դու ապերախտ եւ անխիղճ մարդ քիրտ։
Թո՛ղ ուրեմն օձը քանի ուժ ունի՝
Քեզ չը խնայի՝ վրէժս հանի»։

Քիչ հեռու ընկած անխնամ, անտէր
Մի մատակ դոմէշ ծանր տնքում էր.

«Մատակ, գնէ դու
Եղիր ձեռնտու»։

Ասում էր մարդը լալագին ձայնով,
Իր օրհասական վիճակն ցոյց տալով։

«Քնաւ, քաւ լինի, որ ես ի մարդու
Աշխարհիս վերայ լինիմ ձեռնտու։
Երբ ջահել էի եւ տարին սի ձագ
Տալիս էի ես ասեն ժամանակ՝
Իրկուն առաւօտ սիրուն տանտիկին
Գալիս էր մօտս կովկիթը ձեռքին։
Զազուկս առողջ, կաթս իւղալի
Մարդկանց սրտերին դիւր էին գալի,
Կար պարարտ արօտ, խնամք սիրառատ
Իսկ ձմեռները և՛ յարդ և՛ խոտ շատ։
Այդ երանելի ժամանակն անցաւ,
Մոռացաւ քոլոքն տէրս անիրաւ.
Ինձ դուրս քշեցին գոմից եւ քակից,
Ծերութեանըս էլ չեն քնաւ կարեկից.
Այժմ ծերացած այս դաշտի միջին՝
Սպասում եմ ես սեւ օրիս վերջին.

Մահւանս ժամին մէկ էլ կը խմբւեն՝
Որ անգութ ձեռքով իմ կաշին քերթեն»։

«Ես քեզ օգնելու չունեմ ուժ ու սիրտ,
Ա՛յ դու ապերախտ եւ անխիղճ մարդ քիրտ»։

«Թո՛ղ ուրիմն օձը քանի ուժ ունի՝
Քեզ չը խնայի, վրէժս հանի»։

Գնում է մարդը փաթոյթը վզին՝
Մահւան տաղնապի օրհասի միջին.
Ահա մի աղէս անցնում է դաշտով,
Մտածում դանել մի լաւ վառեակ չաղ.

Դիւը եկաւ մարդուն աղէսի մորթին
Ագահ է միշտ, միշտ մեր աղամորդին։

«Բարեկամ, հոգիս, աղէս, ա՛յ աղէս,
Դթութիւն արա՛, մի ճար ունես՝ տես»։

Աղէսը խղճաց թշւառի վերայ,
Ուզեցաւ օգնել՝ որքան հնար կայ։
Անկասկած, օձը շատ իմաստուն է,
Բայց աղէսըն էլ նրանից պակաս չէ,
Խորամանկութիւն ուզեց բանացնել
Եւ մեր չար օձին լաւ սառցի քաշել։

«Այս խնդիր օձին դու, ա՛յ անիրաւ մարդ,
Փաթթել ես վզիդ որպէս մի լաւ վարդ.
Դեռ զանգատում ես, օգնութիւն խնդրում,
Օձի գլխի տակ փափուկ բա՛րձ դնում։
Ես չեմ հաւատում, որ օձն ինքն իրան՝
Բարձրանար հասնէր քո վզի վերան.
Եթէ ասածդ ճիշտ է ու իրաւ՝
Թող օձն ախճակի, ա՛յ դու անիրաւ
Եւ աչքիս առաջ նորից բարձրանայ,
Եւ նորից վզիդ պինդ փաթթուելի նա»։

Ասաց աղվէսը, հեգնուքեամբ նայեց,
Եւ խելօք օձին շոյել սկսեց։
Օձը կամեցաւ շնորհքը ցոյց տալ,
Աղվէսի գովքին արժանի դառնալ.
Մի վայրկեանի մէջ օլորքն ետ տուեց,
Եւ մարդու վրից վայր դեռին ցաթքեց։
Ազատած մարդը միջոց չըտուեց,
Եւ օձի գլուխն իսկոյն ջախջախեց։
Աղվէսի մորթին նա չը մոռացաւ,
Հանել այդ մորթին եղաւ նրա ցաւ։

«Աղվէս, սիրելիս, դու ինձ կեանք տուիր
Ինձ ապերախտ մարդ խնդրում մի՛ կարծիր.
Գաց այստեղ մի քիչ, փորը ինչ համբերիր,
Մի փորքիկ նվէր ինձնից ընդունիր,
Գնամ տուն, քնքուշ քեզ վառնակ սիրուն.
Քոնն է այսուհետ իմ ողջ հաւաքուն»։

Ասաց մարդն և շուտ դէպ տուն շտապեց,
Թապի, թուլայով նորից դաշտ վազեց։
Գլխին գալիքը աղվէսն երբ տեսաւ՝
Փախաւ, մտաւ բունն, այնտեղ շունչ առաւ.
Խոր հոգոց հանեց, արածը փոշմանեց
Մարդուն «ապերախտ» մակդիրը կնքեց.
Անէծք ու նզով կարգաց ամենին՝
Ով որ լաւութիւն կանի մարդերին։

Հ ա ւ ս ո.

ՍԷՐ ԱՌ ՄԵՐՁԱՒՈՐԸ

(Հատւած Ա. Կուպրովի մի վեպիկից)

—

Գիւղական բժիշկը, որը հրդեհի ժամանակ՝ փրկելով մի աղջկայ՝ կոտրել էր ոտքը, պառկած էր անկողնում։

—Դուք ձեզ չէք պահպանում,—ասաց կալւածատէրը՝ներս մանելով հիւանդի սենեակը։—Դուք բժիշկ էք և ո՛չ թէ հրդեհաշէջ... Իսկ եթէ դուք կորստեան մատն էիք ձեզ հրդեհի ժամանակ... Տեսնո՞ւմ էք, հիմա էլ պառկած էք։

—Պառկած եմ, այո՛։ Բայց և այնպէս փրկեցի աղջկան և իր մօրը։ Նա շատ լաւ կին է, մարդն էլ շատ լաւ է։ Ես ամենևին չեմ զղջացել, որ նետուեցի հրդեհի մէջ։ Հաւատացէք, որ եթէ երկու ոտս էլ կոտրէի, դարձեալ չէի զղջալ։ Մօտ օրս նա իր մարդու հետ ինձ մօտ էր եկել... Պէտք էր տեսնել, թէ ինչպէս նրանք երկուսն էլ ուրախ էին, որ իրանց աղջիկը փրկւել է... Հէնց այդ պատճառով, թէև ես հիւանդ պառկած եմ, բայց բաղդաւոր եմ... Նրանց պատճառով եմ բաղդաւոր... Ես ինձ այնպէս լաւ եմ զգում այն մտքից, որ ես եմ նրանց փրկել... Հաւատացէք, որ ո՛չ մի բան չի կարող հաւասարւել այն երջանկութեան հետ, որ մարդ զգում է այդպիսի րոպէներում... Ուրիշներին բաղդաւոր դարձնել... Մ՛թէ դա քիչ է. ասացէք, քի՞չ է։

—Ի հարկէ, քիչ բան չէ...

—Դա ամենալաւ երջանկութիւնն է... Եւ ամենից ճշմարիտը և հաստատը... Ամեն մի ուրիշ տեսակի երջանկութիւն—վաղանցուկ, փխրուն և սուտ է։ Ո՞ւր է բաղդաւորութիւն ա-

սած բանը. ինչի՞ մէջ է կայանում նա. մի՞թէ հարստութեան մէջ։ Չէ՞ որ նա կարող է ծախի նման չքանալ։ Ընտանիքը։ Բայց բաւական է, որ հողմը մի անգամ փչէ և այդ բաղդաւորութիւնն էլ կը չքանայ... Բայց ապրեցէք դուք ուրիշի երջանկութեամբ, այսինքն՝ ոչ թէ ուրիշի, այլ բաղդաւորութիւն ստեղծեցէք ձեր շուրջը—և ձեր սեփական երջանկութիւնը անվերջ կը լինի, որովհետև ձեր ամբողջ կեանքում, մինչև գերեզման երբէք չէք ասիլ—բաւական է, ամեն բան արել եմ։ Ահա, դա է բաղդաւորութիւնը։ Այդ ժամանակ մենակութիւնն էլ սարսափելի չէ, ասենք մենակութիւն էլ չի զգացւում այդ հանգամանքում... Էլ ի՞նչ մենակութիւն, երբ բոլոր մարդիկ քո մերձաւորներն են։—Տեսէք, ահա. ես երեխաներ չունիմ, բայց բոլոր երեխաներին ինձ մօտ եմ զգում։ Ինձ համար աշխատելին միևնոյն չէ, թէ իմ շուրջը լաւ կամ վատ են ապրում։ Ես աշխատում եմ... Բայց ոչ միայն այն պատճառով, որ ինձ վճարում են... Աշխատանքը ինձ մեծ բաւականութիւն է պատճառում... Ամեն մի աջող անդամահատութիւնից յետոյ՝ ես հիւանդի հարազատներից պակաս չեմ ուրախանում և ամբողջովին համակւում իմ երջանկութեամբ... Դուք հարցնում էք, թէ ինչի՞ ես նեռւեցի հրդեհի մէջ։ Ես չէի կարող չը նեռւել... Հասկանալի է։

—Իսկ եթէ չը կարողանայիք ձեր գլուխն ազատել...

—Երբ և է պիտի սեռնեմ... Բայց աւելի լաւ է այսպէս մեռնել... Յիշում եմ, մի գիւղական ուսուցչի էին թաղում... Նա վրայ էր հասել ջրի մէջ խեղդւող մանուկներին ազատելու... Երեքին ազատել էր, իսկ չորրորդին չէր կարողացել և ինքն էլ խեղդւել էր... Ամբողջ գիւղը... Ի՜նչ ամբողջ գիւղը, սի քանի գիւղերից ահագին ժողովուրդ էր հաւաքւել... Դեղջկուհիները լաց էին լինում... Ամենքը ափսոսում, ողբում էին նրա մահը... Իսկ ես... Ես նրան բաղդաւոր էի համարում... Մեռնել այնպէս, ինչպէս նա՝ կեանքը սերձաւորներին զոհելով... Դրանից լաւ էլ ի՞նչ կարող է լինել։

Կալածատէրը մի քիչ մտածելուց յետոյ ասաց.

—Դուք իրաւացի էք... Ձեր խօսքերը շատ բան բացին իմ առաջ...

Նա սեղմեց անձնուէր բժշկի ձեռքը և դուրս գնաց։

Ջ. Ց.-Գ.

ԵՐԵՔ ՄՈԳԵՐԸ

III

գիպատացին և Հնդկացին լուռ նայեցին սիմեանց և առաջինը ձեռի նշանով հրաւիրեց երկրորդին պատսել իր մասին։ Նա էլ սկսեց։

—«Մեր եղբայրը լաւ խօսեց. չը գիտեմ արդեօք ես էլ պիտի կարողանամ այնպէս պատսել»։ Նա կանգ առաւ, մի քիչ մտածեց և ապա սկսեց. «Եղբայրներ, իմ անունս է Մելքոն. ես ձեզ կը պատմեմ եթէ ոչ ամենահին, գոնէ ամենաառաջի զրաւոր լեզուով, այն է Մանսկրիտերէն։ Ծննդով հնդիկ եմ. իմ ազգը առաջինն էր, որ մշակեց գիտութեան դաշտը, ցանեց և զարդարեց նրան. ինչպէս էլ լինի մարդկութեան ապագան, մեր Վեդաները չեն կորչի, որովհետև նոքա աղբիւր են օգտակար գիտութիւնների և հաւատի։ Վեդաների գիրքը բաժանւում է երեքի՝ Ուպա-Վեդա—մեկնութիւն Բրամի, որ խօսում է բժշկանութեան, զեղարւեստի, ճարտարապետութեան, երաժշտութեան, նետաձգութեան, 64 սեքենական արւեստների և Վեդի-Անգի—սրբութիւնների մեկնութիւն, որ նւիրւած է աստղաբաշխութեան, քերականութեան, կախարդութեան, թալիսմանների և ծիսակատարութեան։

Ուպ-Անգի, որ գրել է իմաստուն Վիասան, իր մէջ պարունակում է աշխարհագրութեան, տիեզերագրութեան, ժամանակագրութեան մասին. նրա մէջ է և Ռոմանան և Մահաբարատա-հերոսական պոէմանները, որ նկարագրում են աստւածների և կիսաստւածների ծագումը։ Այդպէս են նաև մեծ Շաստրաները, որ գրած են սրբազան ներշնչումով։ Ինձ համար այդ բոլորը այժմ գոյութիւն չունեն, բայց նոքա կը ճնան յաւիտեան իբրև

յիշատակ մի հանճարաւոր ազգի։ Նոքա առաջադիմութեան դրաւականներ են։ Բայց դուք երևի կը հարցնէք, որ եթէ այդպէս է, ուրեմն ինչո՞ւ չի երևում այդ յառաջադիմութեան դրաւականների հետևանքը։—Աւաղ, կասեմ ձեզ, որ նոյն այդ գըրքերը արգելք եղան մեր ազգի կատարելագործութեան. պատճառ, որ իբր թէ մեզ ստեղծողը հոգացել է ամեն ինչէ մասին և այդ գրքերի մեկնիչները առաջ բերին այն օրհասական սկըզբունքը, թէ մարդ չը պիտի ձգտի ոչ դիւտեր անելու և ոչ նոր բաներ հնարելու, ասելով, որ երկինքը արդէն ամեն ինչով հոգացել է մարդկանց մասին։ Երբ այդ տեսակ մեկնութիւնները սրբազան օրէնք հրատարակեցան, հնդկական հանճարի լուսատուն հորը գլորուեց, որտեղից մինչև այժմ նա լուսաւորում է միայն նրա նեղ շրջապատը և դարը չուրը։

Եղբայրներ, մեր Շաստրաներ սովորոցնում էին բարձրեալն Աստուծոյ մասին, որ անուանւում է Բարամ. իսկ Ուպի-Անգի-պարանները կամ սրբազան պոէմաները խօսում էին բարեգործութեան մասին և թէ իմ եղբայրը թոյլ կը տայ, դառնալով յոյնին ասաց նա,— ես կաւելացնեմ, որ խօսում էին աւելի երկու գլխաւոր իդէաների—այն է Աստծու և հոգու մասին։ Արդէն շատ երկար տարիներից սկսած՝ հնդկական ամբողջ լաւ ուժերի ուշադրութիւնը գրաւուած էր այդ հարցերով։

Աւանդութիւնը Բրամային հաշւում է մեր ցեղի նախահայրը, որը իր ստեղծագործութիւնով մարդկանց բաժանեց 4 դասակարգի։ Առաջ նա հաստատեց տարատարօրը—երկրի անդունդը և երկինքը։ Յետոյ երկիրը յարմարեցրեց երկրային ոգիներին բնակեցնելու համար։ Նրա շրթունքներից ծագեց բրամինական դասակարգը, որը ասենից աւելի նման է նրան իր ազնուութիւնով, հոգու բարձրութիւնով, որը միակն է բոլոր դասակարգերի մէջ և նրանց միայն թոյլատրւած է ուսումնասիրելու վեդան, որը արտասանելու է նրանց շրթունքներից և պարունակում է իր մէջ բոլոր օգտակար գիտութիւնները։ Յետոյ Բրամանի ձեռքերից ծագեցին kշատրաները կամ զինուորականները, կրծքից վաիսները կամ հովիւները, երկրագործները և վաճառականները, իսկ ոտներից՝ ի նշան ցածր ծագումի, առաջ եկան սիդրաները կամ սորուհները, որոնց վիճակւած էր աշխատել միւս դասակարգերի մարդկանց համար՝ իբրև ծառաներ, երկրագործական մշակներ, բանուորներ և արհեստաւորներ։ Եւ տեսէք, որ օրէնքը խիստ արգելում էր մի դասակարգից անցնել միւսը։ Մէկը խախտելով իր դասակարգի օրէնքը, նա դուրս էր մնում բոլոր դասակարգերից, դառնում էր օտար բոլորի համար և կարող էր յարաբերութիւն ունենալ միայն իրա պէս դասակարգերից դուրս

եկածների հետ—թշուառականների, որոնց ոչ մի դասակարգ չէր ընդունի իր մէջ։

Ես ծնուեցի բրամինն. իմ ամբողջ կեանքս, մինչև իմ վերջին դոյութիւնս, մինչև ժամն պէտք է ընթանայի նախնիքներիս թողած օրէնքներով։ Իմ առաջին կիրակուի կուլ տալը, ինձ անուն տալը, առաջին արև տեսնելս, երեք անգամ մէջքս թելով փաթաթելը, որ նշան էր իմ վերածնելուն, առաջին աստիճան սահնալս, այս բոլորը կատարուում էր առանձին ծիսակատարութիւններով։ Ես չէի կարող ոչ ուտել, ոչ խմել, ոչ քնել, վախենալով խախտել մեր դասակարգի յաւիտենական օրէնքները։ Ո՜հ եղբայրներ, որքան իմ հոգին տանջուել է... պէտք էր ամեն մի քայլափոխում զգոյշ լինել, որովհետև իմ վարքի, կամ օրէնքների պահելուց էր կախուած երկնքի որ մասում տեղափոխուելս՝ ներքին կամ Ինդրայի, թէ բարձր կամ Բրամայի, կամ դարձեալ երկրի վրայ ծնուելս, որպէս զի այնտեղ սկսելով ճիճուի կեանքից՝ անցնեմ, աստիճանաբար, ճանճի, ձկան, և ծնացած կենդանիների կեանքով։ Բրամայի բոլոր օրէնքները պահելու համար իբրև պարգև համարուում էր Բրամայի հետ միանալը, որը սովորական էակ չէր։ Բրամինի դասակարգին պատկանող այն մասը, որը իրան նուիրում էր գիտութիւններին, պատկանում էր առաջի կարգին։ Երբ ես անցայ առաջին կարգից երկրորդը, այն է ամուսնացայ և եղայ տանտէրը, սկսեցի կասկածել ամեն ինչի մասին, մինչև անգամ Բրամայի մասին. ուրեմն ես դարձայ հերետիկոս և կարծէք հորը գլորուած լոյսի փայլը տեսայ վերևում-երկնքում ու ձգտեցի իմանալ թէ արդեօք ո՞րտեղից է լոյսը երևում և փայլում։ Վերջապէս, երկար տարիների ճիգից յետոյ, ես տեսայ և ճանաչեցի ճշմարիտ լոյսը և հանկացայ՝ թէ ի՞նչ է ճշմարիտ կեանքի սկիզբը, իւրաքանչիւր հաւատքի դարերը և այն օղակը, որ Աստծուն միացնում է հոգու հետ, դա սէրն է։ Միայն գործունեայ սէրն է, որ տալիս է մարդուն բախտաւորութիւն և նրա գեղեցկութիւնը կայանում է ամբողջապէս ուրիշին ծառայելու ձգտման մէջ։ Ճանաչելով այդ ճշմարտութիւնը, ես արդէն բրամին չէի կարող լինել։ Բրաման աշխարհը լցրել էր անարդարութիւններով։ Ես չը կարողանալով տանել այդ բոլորը, հեռացայ Լագոր կղզին, որը գտնուում է Գանգէս գետի Հնդկական ովկիանոս թափուելու գետաբերանում։ Այնտեղ, իմաստուն Կապելի յիշատակին կանգնեցրած տաճարի պատերի տակ, իմ աղօթքները խառնելով նրա աշակերտների աղօթքների հետ, որոնց այդ իմաստունի յիշատակը հաւաքել էր միատեղ, ուզում էի հանգստութիւն գտնել։

Տարին երկու անգամ այնտեղ գալիս էին Հնդիկ ուխտա-

ւորները սուրբ Գանգէսի ջրերի մէջ լողանալու. իմ սէրը դէպի այդ թշուառները քանի գնում աւելանում էր, ցանկանում է խօսել նրանց հետ, բայց անասելի ճիգ էի անում լռելու, որովհետև մի խօսք Բրամային, երորդուհեան և Շաստրայի մասին և ես կորած էի։

Մի փոքրիկ կարեկցութիւն դասակարգերից արտաքսածների, որոնց ես յաճախ տեսնում էի թափառելիս, որոնցից շատերին վիճակւած էր մեռնել թափառելով, ով գիտէ ո՞րտեղ, ո՞ր անապատի տաք աւազի վրայ. բաւական էր մի բաժակ ջուր տալ նոցանից մէկին, որ ես էլ դառնայի այն թափառաշրջիկներից մէկը, զրկւէի ընտանիքից, տանից, տեղից, բարեկամներից, իրաւունքից և դասակարգից դուրս նետւէի։ Բայց սէրը յաղթեց ինձ։ Ես սկսեցի խօսել սկզբից տաճարում աշակերտների հետ, նոքա ինձ դուրս քշեցին տաճարից։ Փորձեցի քարոզել ճանապարհների վրայ, ոչնչնդիրներս փախչում էին կամ յարձակւում ինձ վրայ։ Վերջապէս, ամբողջ Հնդկաստանում չեղաւ մի անկիւն, որ ես կարողանայի հանգստութիւն գտնել և ապահով լինեը իմ կեանքը։ Ես օթևան չէի կարող գտնել, մինչև անգամ դասակարգերից վռնդւած թափառաշրջիկների մէջ, որովհետև թէև նրանք դասակարգերից դուրս էին, բայց դարձեալ հաւատում էին Բրամին։ Փնտռում էի մենակութիւն, որտեղ կարողանայի իմ մտածմունքներով թաղնւել բոլորից։ Ես բռնեցի Գանգէսի հոսանքը և հասայ մինչև նրա ակունքը—Հիմալայեան լեռները։ Երբ հասայ Հիւրդվարիան, այնտեղ, որտեղ Գանգէսի ջուրը գլորւելով է հոսում, հեռու իմ ժողովրդից, ես աղօթում էի նրա համար, և ինձ համար, որ վերջապէս գտայ միայնութեան մի տեղ։ Անցնելով նեղ ձորերով, ժայռերի սառնամանիքների վրայով, լեռների ժռտով որոնց գագաթները կարծես աստղերին էր կպած, վերջապէս հասայ Լանգ-Տսօ գեղանի լճի ափերին, որը հանգչում է երեք հսկայ լեռների գոգում, որոնց կատարները պսակւած է սպիտակ ձիան սառնով։ Այդ լեռներն են Տիսէ-Գանգու, Դէ, Գուդու, Տէ-Կայլաս-Պառի։ Այստեղը Ինդայի, Գանգէսի և Բրահմապուտրայի ակունքները, մարդկային այս օրօրանը, որտեղից մարդկութիւնը ցրւեց աշխարհի ամեն կողմը, թողնելով այնտեղ յիշատակ բակա քաղաքը, գրաւում է իմաստունին, հալածւածին խօստանալով նրան մենակութիւն, և ապահովութիւն։

Ես սկսեցի ապրել այնտեղ միայնակ աղօթելով և պատ պահելով ապատում էի մահւանս։

Մէկ անգամ գիշերը, լճի անխօս ափերին մանգալիս, ես լռութեան մէջ օգնութիւն էի կանչում. «Երբ կը դաս ճշմարտու-

թիւն, ճրը կառնես, ով Տէր, սարկիպ հոգին. մինչէ ինձ չը կայ թողութիւն», յանկարծ, այս խօսքերիս վրայ, լճի ջրի մակերեւոյթի վրայ մի լոյս երևաց. նայեցի վերև, փայլում էր մի պայծառ աստղ. նա առաջ էր գալիս հանդարտ դէպ իմ կողմը, և վերջապէս կանգ առաւ իմ գլխի վերև: Ես զարմացայ նրա արտասովոր փայլին, ընկայ գետին և լսեցի հետևեալ ձայնը «քո սէրը յաղթեց, օրհնած լինիս Հնդկաստանի որդի. քաւութիւնը հեռու չէ, երկու ուրիշ օտարների հետ, որոնք կը գան երկրի ուրիշ ծայրերից, դու կը տեսնես Փրկչին և վկայ կը լինես նրա աշխարհ գալուն: Վեր կաց առաւօտեան և գնա նրանց հանդէպ, հաւատացիր ս. հոգուն, նա քեզ կառաջնորդի»: Այն օրից այդ լոյսը ինձ չէր թողնում, ես նրա մէջ տեսայ աներևոյթ հոգու երևալը: Առաւօտեան վերադարձայ իմ թողած աշխարհքը: Ճանապարհին լեռան քերծում մի թանկագին ակ գտայ, և ծախեցի Հիւրդվարեաեի. անցնելով Լագոռը, Կաբուլը, Եզդան հասայ Սպահան. այնտեղ մի սպիտակ ուղտ գնեցի և չը սպասելով քարաւաններին, հասայ Բաղդադ: Ճանապարհորդում էի մենակ, ոչ մի վտանգից չը վախենալով և ահա, եղբայրներ, մենք պատահեցինք այստեղ և այժմ գնում ենք տեսնելու Փրկչին, խօսելու և նրան ծառայելու: Այսպէս, ես վերջացրի իմ պատմութիւնը:

(Կը շարունակի)

Փոխ. Ցավ. Կարապետեան

ՋԻԱՐԱՁԱԼԻՔ

ԽՆԴԻՐ.

Առաջարկութիւն Տիկին-Բիւրեղի

—

Ինչպէս տեսնում էք, այս քառակուսին բաժանած է 9 վանդակների, որոնցից միայն մէջի մի հատ վանդակը դատարկ է. ծայրածներում գրած են 3-ներ, ընդամէնը ութ հատ։ Քառակուսու իւրաքանչիւր կողմի երեք հատ 3-ները եթէ գումարելու լինենք, կը ստանանք 9։ Իսկ բոլոր ութը վանդակներում գրածների գումարը կը լինի 24։ Ի՞նչպէս կարելի է փոփոխել այս թւերը, որ իւրաքանչիւր կողմի երեք վանդակներում գումարը միայ դարձեալ 9 միաւոր, իսկ բոլոր ութը վանդակներում ընդհանուր գումարը չորս միաւորով պակասի կամ աւելանայ, այսինքն 24-ի փոխարէն լինի— մի դէպքում՝ 20, իսկ միւս դէպքում՝ 28։

3	3	3
3		3
3	3	3

№ 1-ում

«Աղբիւրի» նախորդ տպւած խնդրի լուծումը։ Թւերը կարելի է հետևեալ կերպով փոփոխել՝

4	1	4
1		1
4	1	4

2	5	2
5		5
2	5	2

Երկու դէպքումն էլ իւրաքանչիւր կողմի վանդակներում նշանակւած թւերի գումարը 9 է։ Իսկ ընդհանուր գումարը մի դէպքում 20 է, այսինքն նախկինից 4-ով պակաս. իսկ միւս դէպքում՝ 28 է—նախկինից 4 միաւորով աւելի։

ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
և
Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Բ.

1. Դ. Դարի սկզբում հայոց ազգովին քրիստոնեայ դառնալը.

Քրիստոնէական կրօնը առաքելոց ժամանակից սկսած իւր հետևողներն ունէր Հայաստանում, բայց Հայք ազգովին քրիստոնեայ դարձան Դ. դարի սկզբում, ճիշտ այն ժամանակ, երբ Դիոկղետիանոսը մի մեծ հալածել քրիստոնէութիւնը հալածելու հրովարտակներ էր հրատարակում։ Հալածանքը Հայաստանում էլ էր խստութեամբ գործադրւում, և այս հալածանքի զոհերից մէկն էլ ս. Գրիգոր Լուսաւորիչն էր Դ. դարի վերջերին։ 286 թուին երբ Տրդատը Հայաստանի թագն առած Հռոմայեցոց կայսերութեան սահմաններից Հայաստան էր մըտնում, նրա հետ էր և Գրիգորը։ Տրդատը ոտք դնելով Հայաստան, հայոց խնամակալ Անահիտ աստուծուն գոհութեան զոհեր է մատուցանում. նոյն անում են հետևեալ եղած մեծամեծներն ու աւագանին։ Ս. Գրիգորը հրաժարւեց զոհ մատուցանելուց, որով յայտնւեց նրա քրիստոնեայ լինելը։ Տրդատը զայրացաւ, զանազան տանջանքներ տալուց յետոյ նոյն 286 թուին ս. Գրիգորին ձգել տւեց Արտաշատի վիրապը, ուր մնաց նա մօտ 15 տարի։ Քրիստոնեաների դէմ հալածանքը շարունակւում էր. 301 թուին ս. Հռիփսիմեան կոյսերը նահատակւեցին, որով և ամբողջ հայ ազգի քրիստոնէութեան պատճառ դարձան։

2. Սուրբ Հռիփսիմեանք.

Հայաստանի զանազան կողմերը շրջելով, Վաղարշապատ մայրաքաղաքը հասան 37 քրիստոնեայ կոյսեր։ Նրանց մայրապետն էր Գայիանէ։ Կոյսերի մէջ իւր գեղեցկութեամբ, խստութեամբ և սրբութեամբ նշանաւոր էր Հռիփսիմէն, որի անունով էլ նրա ընկերները կոչւեցին սուրբ Հռիփսիմեան կոյսեր։

Ս. Հռիփսիմէն նշանաւոր էր իւր ծագումով էլ։—Պատմական (Ագաթ. տա. Օրթազեղ 1822 թ. եր. 47) և եկեղեցական (Յայսմաւուրք, Հոռի իզ. հոկտեմբեր ե.) աւանդութիւնները ս. Հռիփսիմէին համարում են սերւած Հռոմի կայսերներից։ Յայսմաւուրքին նայելով սուրբ Հռիփսիմէն Կղոդիոս կայս-

բից և նրա ամուսին Պատրոնիկէ կայսրուհուց էր սերուած։ Պատրոնիկէ թագուհին, Յայսմաւուրքին համեմատ, քրիստոնեայ էր. գնացել է Երուսաղէմ, գտնել է տուել Քրիստոսի խաչափայտը, և Յակովբ Տեառնեղբօրից, որ Երուսաղէմի առաջին եպիսկոպոսն էր, ստացել է խաչափայտից մի մասն, որ որդոց որդի անցնելով՝ սուրբ Հռիփսիմէ կոյսին է հասել։

Սուրբ Հռիփսիմէն կենաց փայտը որպէս ժառանգութիւն մօտն ունենալով՝ բազմաթիւ կոյսերի հետ. ս. Գայիանէի խնամքի տակ ապրում էր Հռովմում մի կուսանոցի մէջ։ Դիոկղետիանոս կայսրը խնդրակներ է ուղարկում ամենագեղեցիկ աղջիկների պատկերները նկարելու, որ նրանցից իր համար ամուսին ընտրի։ Խընդրակները մտնում են կուսանոց և նկարում են սուրբ Հռիփսիմէի պատկերը։ Այս չարագուշակ դէպքի եզքին չը սպասելով՝ ս. Գայիանէն առնում է ս. Հռիփսիմէին և նրա ընկերներից էլ քաւական բազմութիւն Ալէքսանդրիայի վերայով նաւում է Երուսաղէմ. այնտեղից գալիս է Եղեսիա, ուր երկրպագելով Փրկչի անձեռագործ պատկերին՝ մըտնում է Հայաստան։ Շրջում է Հայաստանի զանազան կողմերը, կարճ ժամանակով մնում է Վաղարշապատ և թողնելով այնտեղ սուրբ Հռիփսիմէի խաչը, կոյսերի մի մասը զանազան կողմեր ցրելով՝ ինքը սուրբ Հռիփսիմէին հետն առած՝ 37 հոգով գալիս է Վաղարշապատ ու բնակութիւն հաստատում քաղաքի պարսպից դուրս Արեգ դռնից դէպի հիւսիս արևելք այգեստանի հնձանի մէջ, ուր կոյսերը իրանց ապրուստը հոգում են իրանց ձեռագործներով։

Դիոկղետիանոս կայսրը լսելով սուրբ Հռիփսիմեանց վախճանը, հրովարտակ է ուղարկում իւր տէրութեան սահմանները, պատուիրելով սուրբ Հռիփսիմէին գըտնել և ուղարկել իւր մօտ, միանգամայն և, խիստ հալածանք սկսել քրիստոնեաների դէմ։ Այսպիսի մի հրովարտակ էլ հասնում է Տրդատին, որը մի կողմից հալածանք է սկսում քրիստոնեաների դէմ, միւս կողմից էլ, գտնելով սուրբ Հռիփսիմէին, ամուսնում է, որ Թողնի քրիստոնէութիւնը և հարսնանայ իրան։ Սակայն յաղթուելով սուրբ կոյսից՝ ամօթահար է մնում և հրամայում է սպանել նրան ու նրա ընկերներին։ Սուրբ Հռիփսիմէին նահատակում են քաղաքի Արեգ դռնից դուրս դէպի Արտաշատ տանող ճանապարհին մօտ բարձրաւանդակ աւազոտ տեղում, քաղաքից դէպի հիւսիս արևելք, այնտեղ՝ ուր կանգնած է նրա անուամբ կառուցուած սուրբ Հռիփսիմէի վանքը, նրա գերեզմանի վերայ։ Այդտեղ նահատակուում են նրա ընկերներից 32 հոգի և թաղուում նրա հետ։ Հնձանում, ուր շինուած է այժմ Շողակաթի վանքը, նահատակուում է սուրբ Հռիփսիմէի ընկերներից մէկը, որ տկարութեան պատճառով չի կարողանում հեռանալ։ Սուրբ Գայիանէն

նահատակուած է վաղարշապատ քաղաքը շրջապատող պարիսպն փոսի մօտ, դէպի Մեծամօրի կամուրջը տանող ճանապարհի վերայ երկու ընկերներով։

—

3. Սուրբ Հռիփսիմեանց մասին բանաստեղծների կարծիքը.

Սուրբ Հռիփսիմեանց այս պատմական և եկեղեցական աւանդութեան մէջ իրար հետ շփոթուած են դէպքերը։—Ճշմարիտ է, կղոդիոս կայսրը այնպիսի խստութեամբ չէր հալածում քրիստոնեաներին, որպէս էր նրա յաջորդ Ներոնը, սակայն նա քրիստոնեայ էլ չէր։ Քրիստոնեայ չէր և նրա թագուհին, ուրեմն չէր էլ գնայ նա Երուսաղէմ Քրիստոսի խաչը գտնելու։ Այս աւանդութեան մէջ շփոթուած են կղոդիոսը Կոստանդին Մեծի և Պատրոնիկէն՝ Հելինէի հետ։ Եւ որովհետև Հելինէն Դ. դարի առաջին քառորդին գտնել տուեց Քրիստոսի խաչափայտը սուրբ Հռիփսիմեանց նահատակութիւնից յետոյ, ուրեմն սուրբ Հռիփսիմէն ոչ մի ժառանգութիւն չէր կարող ստացած լինել Պատրոնիկէից, բայց կարող էր խաչ ունենալ, և թողնել այն Վարագուժ, այդ խաչը թէև ոչ Քրիստոսի խաչափայտից, այնուամենայնիւ նմանական լինել որպէս սուրբ Հռիփսիմէից ինացած սրբութիւն։

Սուրբ Հռիփսիմէի կայսերական սերունդ համարելը կարող է առաջացած լինել հետևեալ դէպքից։ — Դիոկղետիանոսի կին Պրիսքան և դուստրն Վաղերիա, որ կայսրի գահակից Գաղերիանոսի կինն էր, քրիստոնէութեան յայտնի հալածանքի ժամանակ, իբրև քրիստոնեայ, հալածանքից ազատուելու համար փախան աբևելք ու այնտեղ էլ սպանուեցին (Ֆարրար, Քրիստոսի առաջին օրերը. ռուս. թարգ. եր. 746։ Գէորգ Վէբէր, ընդհ. պատմ. հատոր IV. ռուս. թարգ. եր. 552։ Չէմս Րօբերտսոն, եկեղ. պատմ. ռուս. թարգ. հատ. I. եր. 131)։— Հաւանական է, որ Պրիսքայի և Վաղերիայի դէպքերը ծառայել են որպէս հիմք սուրբ Հռիփսիմէի արքայական ծագմանը, նոյնացնելով նրան Վաղերիայի իսկ սուրբ Գայիանէին Պրիսքայի հետ։ Պրիսքայի և Վաղերիայի դէպի արևելք գալու պատմութիւնը շփոթել են սուրբ Հռիփսիմէի և սուրբ Գայիանէի դէպի Հայաստան գալուն և Վաղարշապատում նահատակուելու պատմութեան հետ։

Աւանդութիւնը, որ գիտէ գերբնական մշուշով վարագուրել բնականը, կամեցել է սուրբ Հռիփսիմէին հասարակ մահկանացուներից բարձրացնելով կայսերազն դարձնել, որպէս զի Տրդատի ուշադրութեան արժանանար, որպէս զի հայոց աղգովին քրիստոնեայ դառնալու պատճառ լինէր։ Բայց սուրբ Հռիփսիմեանց իսկական պատմութիւնը պարունակող աւանդութիւնը շատ թափանցիկ է, և նրանց պատմական անձնաւորութիւն լինելը ակներև։ Այս բանը չի հերքում խիստ քննադատութիւնն անգամ։

Ուսուցչապետ Սիմէոն Վէբէրի «Կաթուղիկէ եկեղեցին ի հայս»

քննական յօդուածի բովանդակութիւնը ժէջ բերելով Հանդէս Ամսօրեան (1903, յունիս, երես 175) գրում է. «Թէ նոյնպէս յէականս պատմական առնելու է ս. Հռիփսիմեանց անձնաւորութիւնքն, ապահով է, քանի որ Մանդակունւոյ և Փորպեցւոյ օրով կը վկայուի անոնց վկայաբանաց ոչ միայն գոյութիւնն, այլ և մեծ յարգանք վայելելն. ծանօթ նաև Բուզանդայ (պ. ծդ.)։ Հեղինակը (Ս. Վէքէր) նաև ուրիշ պարագաներ աւելի հաւանական ընելու համար ամեն տեսակէտով քննած է զանոնք։ Թէպէտ Պրիսկայ և Վալերիայ գրոյցը շատ նմանութիւններ ունի, կընդունի ինքն ալ, բայց իրաւամբ ոչ այն կարծիքը, (Լանգլուա եւ Է. Բ. Սարգսեան) թէ սուրբ Հռիփսիմեանք յիրականին նոյն ըլլան յիշելոց հետ՝ Հռիփսիմէ և այլն մկրտութեան անուանքն ըլլայ առաջնոց։ Լաւ կէտ մըն է մտադիր ընթերցողին այն պարագային, որ ճիշդ Պրիսկայ և Վալերիայ մասին պատմուածները, որոնք ծանօթ են արևմտեան պատմչաց, գեղեցիկ փաստ մըն է ցուցնելու, թէ ս. Հռիփսիմեանց վարուց շատ մերձաւոր և նման պարագաներն ալ կրնան յէականս պատմական ըլլալ։ Թերևս նաև, կըսէ, ս. Հռիփսիմեանք Պրիսկիայ և Վալերիայ ընկերակիցք էին, յետոյ ուրեմն բաժանուած իրարմէ, ճիշդ ինչպէս վրացական աւանդութիւնը զՍ. Նունէ բաժնուած կըսէ ս. Հռիփսիմեանց խմբէն»։

Ուրեմն ուսուցչապետ Ս. Վէքէրն ընդունելով ս. Հռիփսիմեանց անձնաւորութիւն լինելը՝ կարծում է, որ նրանք Պրիսքայի և Վաղերիայի ընկերակիցներն էին, բայց ոչ իսկական Պրիսքան և Վաղերիան՝ մկրտութեան ժամանակ Հռիփսիմէ և Գայիանէ կոչուած՝ ինչպէս կարծում են Լանգլուան և Է. Բ. Սարգսեան։

Մեզ սիրելի է ազանդական մշուշը փարատելով՝ ս. Հռիփսիմէին և իւր ընկերներին ճանաչել ի ծնէ հայ. զոհ այն հալածանքին, որ Տրդատը, հետևելով Դիոկղետիանոսին, հանեց Հայաստանում քրիստոնեաների դէմ։ Բարեբաղդաբար մեր կարծիքը հաստատութիւն է գտնում Գաբրիէլեանի մօտ, որի մասին յետոյ։

—

Ծատիկ եպիսկոպոս.

(Կը շարունակի)

ՄԱՅՐԸ ՄԱՆԿԱՆՈՑՈՒՄ

—

Մանկանոց... Դա բոլորովին մի առանձին աշխարհ է, որը կարող է ամենաջերմ, կենսատու ու շողշողուն ճառագայթների և անկեղծ ուրախութեան ու երջանկութեան աղբիւր լինել, որտեղ մանկան խնդագին ծիծաղը և բերկրալի զարգացմամբ ու բաւականութեամբ լի հայեացքը կարող են մոռացնել տալ ձեզ, երիտասարդ մայրեր, ամեն բան աշխարհում, ամբողջովին նուիրուել մանուկներին և միևնոյն ժամանակ նրանցից նոր ոյժ առնել առօրեայ գոյութեան համար: Եթէ դուք ձանձրանում և տխրում էք հասարակութեան մէջ, գլուխներդ կախ մի՛ ձգէք, գնացէք մանկանոց,—այնտեղ, ուր բացուում է դէռ բոլորովին մատաղ, առողջ կեանք իր պայծառ աչքերով, անկեղծ խօսքերով, քըրքիջով ու բերկրանքով, և դուք իսկոյն կըմոռանաք այստեղ ձեր վիշտը, տխրութիւնը, կեանքի ծանրութիւնը և այլն: Բայց եթէ նոյն մանկանոցում լալիս է մանուկը, դառն արցունքներ է թափում նա,—կրկին շտապեցէք այնտեղ, այդ մանկանոցը, որովհետև ոչ ոք այնպէս չի հոգում մանուկի համար, ինչպէս այն մարդը, որ սիրում է երեխաներին,—դա ամենքը պէտք է անեն ըստ մարդկային խղճի, բայց, ի հարկէ, ամենից շատ և ամենից առաջ այդ բանը պարտական է անել բարի և սիրող մայրը: Մօր մի քաղցր հայեացքը բաւական է, որ մանուկը հանդարտուի, իսկ եթէ մայրը դրա հետ միացնէ և քաղցր խօսքը, մանուկը վերջնականապէս կըմխիթարուի: Ո՛չ մի դայեակ, որքան էլ բարի և անձնուէր լինի, ոչ մի վարձած բօնն, որքան էլ նա խելօք լինի և նրա վարձագինը՝ բարձր,—անկարող են առաջ բերել այն զօրեղ, առողջարար փոփոխութիւնը մանկան օրգանիզմում, ինչպէս իր մանուկներին ճշմարտապէս սիրող, խելացի մայրը—միայն իր մի երևալովը իր երեխաների մէջ:

Բայց վա՛յ այն չարաղործ մայրերին, որոնք արհամարհում են իրանց երեխաներին, որոնք երբէք չեն զուրզուրում նրանց, չեն ասում նրանց մի ջերմ, սըրտագին խօսք,—և դժբաղդաբար այդպիսի մայրերը շատ կան մեր մէջ: Վա՛յ այն մօրը, որի հետս գալուց յետոյ՝ երեխաները սպասում և ցանկանում են, որ նա շուտ հեռանայ... Այդպիսի մայրը չի ներշնչում մանկանը, որ սա կատարեալ վստահութեամբ և սիրով վերաբերուի դէպի իրան. և մանուկը իր հասակի մեծանալով աւելի և աւելի կըզատնայ ծածկամիտ, վատ հակումներ ձեռք կըբերէ, որոնց ոչ ոք չի կարող դիմադրել այնպէս աջող կերպով, ինչպէս կարող էր մայրը, և վերջապէս, այդպիսի մանուկը, երբ բոլորովին մեծանայ, ամենևին կը թողնէ և կը մոռանայ մօրը:

Ո՛չ: Բարի, լաւ մայրը, ինչպէս հոգատար տնտես կամ

աւելի լաւ է ասել՝ ինչպէս խե-
լացի, իր գործը իմացող ճարտա-
րապետ, ամեն օր դիտում է իր
աճող մանուկներին, նկատում է
ամենափոքր պակասութիւններն
ու արատները, բայց միևնոյն
ժամանակ և նրանց աչքի ընկ-
նող լաւ կողմերը։ Ոչ ոք չի կա-
րող մօրից աւելի լաւ սովորեց-
նել մանկանը—ոչ թէ կարդալ ու
գրել—դա, համեմատաբար, չըն-
չին բան է,—այլ ուղիղ և լաւ
մտածել, դատել, հասկանալ,
խօսել և գործ կատարել, դիտակ-
ցաբար օգտւել իր զգացմունքնե-
րից, ուղիղ դիտել և դարբերել
զանազանել իրերը։ Մանկանոցը,
տունը, պարտէզը, բանջարա-
նոցը, մանկան շրջապատը՝ խե-
լօք և զարգացած մօրը ահագին
նեւթ են տալիս, որոնցով նա
կարող է վարպետութեամբ զար-
դացնել իր երեխաների ուժերը
և ընդունակութիւնները, ինչպէս
ֆիզիքական, այնպէս էլ մտաւոր։
Ո՛չ դայեակները, ոչ տնային
դաստիարակուհիները, ոչ նոյն
իսկ «մանկական պարտեզները»,
որքան էլ վերջիններս օգտաւէտ
լինեն, երբեք չեն կարող՝ մինչև
մանուկի դպրոցական հասակը՝
նրան այնքան օգուտ բերել, որ-
քան կարող է մայրը իր սիրող
սրտով, խելօք աչքով և խելացի
խօսքով։ Դժբաղդաբար, մեր
մայրերի մեծամասնութիւնը հէնց
իրանք չեն պատրաստած կամ
շատ քիչ են պատրաստած այն
բարձր պարտականութեան հա-
մար, որը նրանց վրայ դրել է
բնութիւնը անվճռաբեկ կերպով։
Մանաւանդ, մեր մայրերին և
հայրերին դժւար է աշողւում
չափ կամ ներդաշնակութիւն
պահպանել դաստիարակութեան
գործում, կամ անչափ քնքշու-
թեամբ են վերաբերւում իրանց
երեխաներին, երես են տալիս
նրանց կամ անչափ խստութիւն-
ներ են բանեցնում։ Ո՛չ մէկը,
ոչ միւսը երբէք լաւ հետևանք
չեն տալիս, որովհետև մանուկ-
ներից ոմանք զուրկ են լինում
կեանքի ուրախութիւններից՝ հա-
մարեա ծննդեան առաջին օրե-
րից սկսած, իսկ միւսները՝ ընդ-
հակառակը՝ չափազանց շուտ և
վաղ քնքշանում են, երես են առ-
նում։ Եւ այդ պատճառով հա-
մարեա անպէտք են դառնում
կեանքի և գոյութեան կռւի հա-
մար։ Միայն խելացի սիրոյ
վրայ հիմնւած ուղիղ դաստիա-
րակութիւնն է մանկանը բա-
րոյապէս, ֆիզիքապէս զարգա-
ցընում և սովորեցնում նրան
խելացի կերպով օգտւելու իր
մտաւոր, բարոյական և ֆիզի-
քական ուժերից,—միայն այդ-
պիսի դաստիարակութիւնը կա-
րող է կեանքի մէջ ուրախու-
թիւն և ճշմարիտ բաղդաւորու-
թիւն պատճառել մարդկանց։
Եւ ահա ծնողական այդ մեծ
և դժւարին պարտականութիւ-
նը գէթ մասամբ կատարե-
լուն նպաստել է և պէտք է
նպաստէ «Աղբիւրը», որով շատ
խելացի կերպով կարող են օգ-
տւել մեր սիրելի կարգի գրա-
գէտ մայրերը։

Զապել Տեր-Դրիգորեան.

Խմբագիր-հրատարակիչ՝
ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Փարիզեան նորութիւններ

Ներկան վարիզեան ԵԼԵԿՏՐԱԿԱՆ ԼԱՄՊԵՐՆԵՐ. հատը 2 ր.

ոսկեայ ՓԱՐԻԶԵԱՆ ՔԱՐՈՑՆԵՐ ամենաճիշտ նոմանիմներով ատամանդի և մարդարիտի, ելէքտրական լուսատուութեամբ, հատը 2 ր.—25 կ.

ոսկեայ ՓԱՐԻԶԵԱՆ ՍԵՂԱՆԻ ԺԱՄԱՑՈՒՑԻՉ ջրեզր լրկած էլէկտրական լոյսով. հատը 6 ր.

ՍԿԱՆԱՆ ՓԱՐԻԶԵԱՆ, գործնական ձեւուածոյներ, զարդ ելէքտրական վերջին ձեւ բառերով, հատը 4 ր.

ՍԿԱՆԱՆ ՓԱՐԻԶԵԱՆ ինքնաշարժ լուցկիատուփեր. հատը 95 կոպ.

Ուղարկուում է բոլորը միասին կամ հատ հատ, պատերի վրայ ամրացուցած լինուց:
ВАРШАВА, Ординацкая 12. В. КЛЕБЕРЪ. 0—2

Աղբիւր-Տարազի խմբագրատանը

Վաճառւում են

հետեւեալ մեր հրատարակութիւնները.

	գինը
Ալֆոնս Տոդէ՝ Խոյրնդոս. կատակերգ. 4 արար.	50 կ.
Ա. Լ., Սաֆօ՝ պօէմա	50 »
Ալեհարսեան՝ Ֆրիտեօֆ Փիւրացի, նորմանդական հին զրոյց, շքեղ պատկերներով	50 »
Շիրվանզադէ՝ Մելանիա՝ վէպիկ փառաբանմամ	50 »
Վ. Փափազեանց՝ Հայ-Բուռաեների վրաեներում եւ Աբծլի մանր	25 »
Սիսոլեա՝ Կոլումբա եւ ամերիկայի գիւտը	5 »
Շիլլէ՝ Ժերմդլին, Թարգմ. Բաֆֆի	5 »
Լեոնա Վիլիամ՝ Նոա մարդը	5 »
Շմիդ՝ Գալիա	10 »
Յ. Դազարեանց՝ Գիւղի, մի արկած քրիստիի կեանքից	15 »
Արքիւրօ Կաստիօն՝ Պատկանի լեգենդա	2 »

«ՏԱՐԱԶ» առաջիկայ 1904 Թ. բաժանորդները, ուղարկելով երկու րուբլի, կարող են ստանալ 1904 Թ. տիկ. Սօֆիա Չալալեանի ֆրանսիական կարի եւ ձեւի ձեռնարկը, բոլոր ցանկութեան, հայերէն կամ ռուսերէն լեզուով: Ձեռնարկը կունենայ հետեւեալ վերնագիրն ու բովանդակութիւնը:

ՉԵՒԻ ԵՒ ԿԱՐԻ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐ:

Պատկերազարդ եւ գծանկարներով: Սօֆիա Չալալեանի:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ.

1 մաս: Լանջազգեստներ (ливфа), նրանց բոլոր տեսակները ձեւելու, կարելու և յարմարացնելու եղանակները: Կանոնաւոր և անկանոն կազմւածքների համար ձեւելու և յարմարացնելու միջոցներ:

2 մաս: 1) ծածկոցներ և վերարկուներ (կոնֆէկսիօն), ժակէտ, բոռնուզ և այլն, 2) շրջազգեստներ, տանու խալաթների և պառկի զգեստներ, պէրնէկ, պօլոնէզ և այլն:

3 մաս: Երեխայոց զգեստներ, ծածկոցներ և վերարկուներ. աղջիկների և տղաների համար առանձին:

4 մաս: Ամեն տեսակ սպիտակեղէններ. կանանց, տղամարդկանց և երեխայց համար: Ձեւելու և կարելու եղանակներ: կարեւոր բացատրութիւններ և խորհուրդներ: Վերջաբան:

1 մասը կուղարկւի «Տարազի» բաժանորդներին 1904 Թ. յունիսի 1-ին, 2-րդ և 3-րդ մասը սկսած. 1-ին և 4-րդ մասը դեկտ. 1-ին:

4-րդ մասը գրաւոր գործով ամբողջ ձեռնարկի գինը կը լինի 3 ր. 5 կ.:

XXII տ.

ԱՂԲԻՒՐ

Շարունակւում է ներկայ 1904 թ.

XXII տ. *բաժանորդագրութիւնը* **ԱՂԲԻՒՐ**

Ամսագրի և ՏԱՐԱԶ *պատկերազարդ շաբաթաթերթի, որոնք հրատարակւում են ճոխ և ընդարձակ ծրագրով ու ծաւալով։*

ԱՂԲԻՒՐԻՆ և ՏԱՐԱԶԻՆ *աշխատակցում են մեր գրական ամենաընտիր ոյժերը։*

ՊՐԻՄԻԱՆԵՐը, որ տրւում են այժմեանից՝ 1) **Ս. ՍԱՀԱԿ**, 2) **Ս. ՄԵՍՐՈՊ**, 3) **ՎԵՀԱՓԱՌ ՀԱՑՐԻԿԸ ՕՇԱԿԱՆՈՒՄ**, և 4) *էլեկտրօ-ֆիթանկար,* **ՉՆԱՇԽԱՐՀԻԿ**։

Յայտարարութիւններ **ԱՂԲԻՒՐԻ** *կազմի վրայ՝* 1/2 *էջի տողը 50 կ., ամբողջ երեսը 50 ր., 1/2 եր. 30 ր. իւրաքանչիւր անգամ։* Տարազում՝ 1/5 *վերջին երեսի տողը՝ 25 կ., առաջին երեսում 40 կ.,* արտասահմանից կրկնակի։

ԱՂԲԻՒՐԻ *տարեկան բաժանորդագինը՝* **3** ր. (արտասահման 5 ր.) **ՏԱՐԱԶ 6** ր. (արտասահմ. 10 ր.) *Աղբիւր-Տարազ միասին հասցէով—***10** ր. (արտասահման 18 *րուբլի կամ 50 ֆր.)։*

Պրեմիաներ, յատկացմներ, սահմանւում են միմիայն Աղբիւր Տարազ միասին հասցէով ստորագրողներին։

Ապառիկ կամ մաս-մաս վճարող բաժանորդներ չեն ընդունւում։

Թիֆլիսում բացի խմբագրատանից (Օլգինսկայա 33), կարելի է ստորագրել Կենդրոնական և Գուտենբերգ գրավաճառանոցներում։ Բագւում Մ. Ա. Սունդուկեանի «Сотрудникъ» լրագրավաճառանոցում։

Հասցէն՝ Тифлисъ, Редакція АГБЮРЪ *կամ* ТАРАЗЪ.
Tiflis, (Caucase) Rédaction ACBUR *կամ* TARAZ.

XV տ.

ՏԱՐԱԶ

XV տ.